առաջ քննուին: Յետագային նրանք աւելի եւս մեծ վճռականութիւն ցոյց տուին այս ասպարէզում՝ հրատարակութեան տալով ցարական կառավարութեան գաղտնի դաշնագրերն ու դիւանագիտական վաւերագրերը:

Բոլշեւիկների այս աննախընթաց ժեստերը շփոթութեան մատնեցին միայն տիտղոսաւոր դիւանագէտներին: Առաջաւոր հասարակութիւնը թէ՛ Ռուսաստանում եւ թէ՛ արտասահմանում ընտելացած էր գաղտնի դիւանագիտութիւնը վերացնելու պահանջին դեռ Փետրուարեան Յեղափոխութեան առաջին օրերից: Անգամ Վիլսոնի պէս պատասխանատու մի պետական մարդ ազդուած էր նրանից այն աստիճան, որ իր յայտնի «14 կէտերի» պատճառաբանութեան մէջ արտայայտուեց գաղտնի դիւանագիտութեան դէմ: Ազգերի Դաշնակցութիւնը եւս, որ վիլսոնեան յղացումով կեանք ստացաւ, գաղտնի դիւանագիտութեանը տեղ չտուեց իր գործառնութիւնների մէջ, թէեւ նրա անդամները դեռ չեն հրաժարուել այս աղէտաւոր սովորութիւնից:

Սակայն, այժմ երկրագնդի վրայ չկայ մի իշխանութիւն, որը նուիրուած լինի գաղտնի դիւանագիտութեանն այնպէս, ինչպէս Խորհրդային իշխանութիւնը: Բոլոր միջոցները հակառակորդներին վնասելու համար սուրբ նկատելով՝ այս իշխանութիւնը երէկուան թըքած-մրած գաղտնի դիւանագիտութիւնն այսօր փայփայում է իբրեւ քաղաքական առաքինութիւն: Նրա արտաքին յարաբերութիւնների մէջ կարելի է ասել չկայ որեւէ լուրջ գործ, որ զերծ լինի գաղտնի դիւանագիտութիւնից **կամ դաւադրութիւնից**: Ուր նա անյարմար է նկատում գաղտնի դիւանագիտութիւն **վարել** արտաքին գործերի պաշտօնատան միջոցով, «առեւտրական ներկայացուցիչներին» է առաջ քշում: Եթէ այս էլ ինչ-ինչ անյարմարութիւններ է ներկայացնում՝ դիմում է Կոմինտերնի օգնութեանը: Խաբեբայութիւնը, կաշառքը, սպառնալիքը, լրտեսութիւնը, կեղծ վաւերագրերի արդիւնագործութիւնը, Գէ Պէ Ու-ի պրովոկասիոնը, մահացութիւնը — բոլորը, բոլորը տրամադրելի են բոլշեւիկեան գաղտնի դիւանագիտութեան համար:

Թէ այս դիւանագիտութիւնը միջ-պետական յարաբերութիւնների մէջ ի՛նչ դատապարտելի դաշնագրերի կամ համաձայնութիւնների է յանգել՝ մենք այսօր որոշապէս ասել չենք կարող: Այդ յայտնի կը դառնայ հակախորհրդային յաղթական յեղափոխութիւնից յետոյ, երբ հրապարակ կը հանուին արտաքին «ժողկոմատի»*) եւ Գէ Պէ Ու-ի**) արխիւները, ինչպէս որ բոլշեւիկները հրապարակ հանեցին ցարական կառավարութեան արխիւները: Այդ ժամանակ է, որ հաստատապէս կարող ենք ասել, թէ ի՛նչ են ներկայացնում ռուս-թիւրքական, ռուս-իտալական, ռուս - **աֆղանական** գաղտնի դաշնագրերի մասին տարածուած յամառ լուրերը: Առայժմ մենք միայն գիտենք, որ արտաքին «ժողկոմատը» եօթը կողպէքի տակ է պահում այս եւ նման մի քանի պետութիւնների վերաբերեալ վաւերագրերը — մի բան, որ նա անշուշտ չէր անի, եթէ նրա դիւանագիտութիւնը զերծ լինէր մութ գործերից:

Բայց որ Խորհրդային դիւանագիտութիւնը բոլոր երկիրներում մութ գործերի վրայ է, այդ արդէն գաղտնիք չէ ոչ ոքի համար:— Գաղտնիք չէ, որ այդ դիւանագիտութեան ներկայացուցիչները Միլլի կուսակցութեան հետ համաձայնութիւն էին **կայացրել, որի** զօրութեամբ Թուրքերը իրաւունք էին ստանում եւ մինչեւ իսկ պարտաւորւում՝ Հայաստանի Հանրապետութեան դէմ յարձակուելու: Գաղտնիք չէ, որ նրա գործակալները Սիւրիայում, Մարոկկում, Հնդկաստանում եւ առհասարակ բոլոր գաղութներում տիրող իշխանութիւնների դէմ ապստամբութիւններ են հըրահրում եւ տեղական ժողովուրդներին կատարել տալիս:

Գաղտնիք չէ, որ Չինաստանը քաղաքացիական կռիւների, աւերի, աւարի, արիւնհեղութիւնների թատերաբեմ դարձնելու մէջ հսկայական պատասխանատուութիւն **ունին** Խորհրդային իշխանութեան գործակալները՝

---

*) Արտաքին գործերի **Ժողովրդական Կոմիսարիատ** կամ սովորական խօսքով՝ Արտաքին Նախարարութիւն:

**) Պետական Քաղաքական Վարչութիւն կամ Քաղաքական Ոստիկանութիւն: